# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ցողամարգ բնակավայրերում Գոգհովիտի բազալտների հանքավայրի արդյունահանման /ընդլայնման/ և գործող հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լրամշակված հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման հավելվածի՝ 2026 թվականի փետրվարի 3-ին՝ ժամը 14:00-ին Շիրակի մարզի Աշոցք խոշորոցված համայնքի Ցողամարգ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, կայացել է «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Շիրակի մարզի Գոգհովիտի բազալտների հանքավայրի ընդլայնման և առկա ջարդիչ տեսակավորող կայանի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը: Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ-ի (նախաձեռնող) Աշոցք համայնքից՝ համայնքապետարանի աշխատակիցները, Ցողամարգ բնակավայրի բնակիչները, ինչպես նաև շահառու համայնքների ներկայացուցիչները:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց հանդիպման մասնակիցներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի «թ» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքննվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ,

վառելիքի արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, առաջացող թափոնների, աղմուկի և թրթռման հետ և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ-ի ներկայացուցչին և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը և շրջակա միջավայրի վրա ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումները: «ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ **Արտակ Անտոնյանը** ներկայացրեց Գոգհովիտի բազալտների հանքավայրի արդյունահանման /ընդլայնման/ և գործող հանքավայրի տարածքում ջարդիչ տեսակավորող կայանի վերազինման աշխատանքները և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը, և նշեց որ հիմնական ազդեցությունները կապված են փոշու արտանետումների հետ, որի նվազեցման համար իրականացվելու են ջրցան աշխատանքներ օրական 2 անգամ չոր և շոգ եղանակներին անհրաժեշտության դեպքում 4 անգամ: Հավելեց նաև որ ջարդիչ կայանի վերազինումից հետո ունենալու ենք փակ համակարգով աշխատող ջարդիչ կայան որն ամբողջությամբ կնվազեցնի փոշու արտանետումները:

**Բնակիչները** հարց բարձրացրեցին բնակավայրում սոցիալական ծրագրերի վերաբերյալ, քանի որ բնակավայրում խնդիրները շատ են և մեծ աջակցության կարիք կա, և հավելեցին որ բնակավայրից բավականին հեռու է գրեթե 2 կմ և ավել հետևաբար ազդեցությունը հավասար է զրոյի բնակավայրում:

**«ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ**-ի տնօրեն Գագիկ Մխիթարյանը պատասխանեց որ նախատեսված գործունեության դիմաց սահմանված է գումար, որը ընկերության կողմից փոխանցվում է համայնքին, համայնքային կարիքները հոգալու համար, և հավելեց որ նախկինում էլ, այժմ էլ ցանկացած ժամանակ յուրաքանչյուր բնակչի կողմից բարձրացված խնդրին տալիս ենք լուծում և աջակցում ենք և հավելեց նաև ընկերության կողմից ճանապարհի կառուցումը, որը տարիներ շարունակ եղել է բնակավայրի խնդիրներից կարևորագույնը, ինչպես նաև անհատույց օգտագործվում է ընկերության տեխնիկան համայնքի կարիքների համար:

Այլ հարցեր չհնչեցին և **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների պատասխանատու և վարող՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն «ՊՈԱԿ» ՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

«ԱՐԾԱԹԵ ՍՅՈՒՆ» ՍՊԸ-ի տնօրեն /ներկայացուցիչ՝